

գահոյքի մը վրայ, գեանէն ոչ աւելի քան ոտք մը բարձր, բայց (գահոյքը) բոլորովին ծածկուած գորգերով»<sup>(10)</sup> : Պարսից արքունիքը այցելող օտար ուղեգիրներ, գեսպաններ նոյնպէս կը վկայեն հոն գորգի գործածութեան մասին, որոնք սակայն հոս մի առ մի յառաջ բերել աւելորդ կը համարիմ, միայն կ'ուզեմ հոս յիշել թէ՛ նոյն գորգի գործածութեան կը հանդիպինք Վրաց արքունեաց մէջ : John Chardin 1672 - 1673 Թիֆլիս այցելութեան կը գրէ թէ արքունի ընդունելութեան սրահը 110 ոտք երկար էր եւ «սրահը ամբողջ ծածկուած էր ընտիր գորգերով»<sup>(11)</sup> :

Արեւելեան, եւ մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքի պատմուածքները, ինչպէս Հաղար ու մէկ Գիշերներու չարքը, բազմաթիւ վկայութիւններ ունին պատուոյ գորգերու մասին : Ուրիշ պատմուածքներ կը յիշեն թոչոյ գորգեր, ճաշու գորգեր, աղօթքի գորգեր : Դարեր առաջ (ԺԳ դարուն) հայերէն թարգմանուած Պղնձէ Քաղաքին (հրատ. Կ. Պոլիս, 1792) պատմուածքներուն մէջ կը յիշուի. «...եւ ոսկի տախտակ մի դրած էր ի վերայ աթոռոյ մի, եւ զոհար աղունք ի նմա մարդարտով օրինած : Եւ զեղեցիկ թագուհի մը ի վերայ աթոռին նըստած, եւ խալիչայ մի բռն մարդարտով լցած ի ներքեւ թագուհւոյն» (էջ 40) : Արքունի գահուն այս նկարագրութիւնը<sup>(12)</sup> իր բոլոր մանրամասնութեամբ կը յիշեցնէ Երուսաղէմի հայալանքին մատենագարանին մէկ մեծարժէք ձեռագրին, Կարսի Գաղիկ թագաւորին Աւետարանին, այն մանրանկարը որ կը ներկայացնէ Գաղիկ թագաւորը, Գորանդուխտ թագուհին իրենց Մարիամ արքայադստեր հետ նստած գահին վրայ, որ ծածկուած է գորգերով՝ որոնք մարդարտագարդ կ'երեւան : Գծարխտարար այս մեծարժէք մանրանկարը ուրիշներու հետ վայրագօրէն եղծուած է, հաւանօրէն խելագարած կրօնաւորէ մը, եւ այդ յօշոտուած միճակին մէջ մեղի հասած :

Մեր մատենագրութեան մէջ կան վկայութիւններ՝ ի պատիւ սրբոնուած գորգերու : Բիւզանդ կը վկայէ որ երբ Հայոց Արշակ արքան Պարսից արքունիքը ներկայացաւ՝ չվայլեց սովորական պատիւը Եա-

(10) The Four Epistles... London, 1694, p. 92. George Sandys Անգլիացին 1610ին կը վկայէ. «Երբ Սուլթանը (Ահմէտ Ա. Ղազի, 1603-1617) գեսպաններ կը հրաւիրէ, կը նստի սպիտակ մարմարեայ սրահի մը մէջ... ցած գահոյքի մը վրայ բազմած, որուն վրայ սփռուած էին հիանալի գորգեր» : (A. Relation... London, 1627, p. 75) : 1850ին դեռ նոյնն էր սովորութիւնը, այլ սակայն գորգերը «հիանալի» չէին : Անգլիացի մը կը վկայէ որ գեսպանութեան ընդունելութեան սրահին գորգը սրահը չէր ծածկեր, ոչ ալ ընտիր էր : (The Roving Englishman in Turkey. — London, 1855, p. 3).

(11) Travels. — London, 1686, p. 215.

(12) Եթովպական Fetha Nagast (Թագաւորաց Փառքը) հնդարեան սրբազան մատենին մէջ կ'ուանուի թէ Հրեաներուն Սողոմոն թագաւորը, Ծէպայի Մակոտ թագուհին համար «գահ մը կանգնեց ծածկուած մետաքսեայ գորգերով, որ ունէր ոսկիէ, արծաթէ, մարգարտէ եւ ազամանդէ ծոպեք» : (Տես անգլ. թարգմ. Hugues Le Roux, Funk and Wagnall, էջ 190) : (1872էն առաջ ձեռագիրը Եթովպիան գրաւոր անգլիական բանակէն իրր աւար տարուած, կը պահուէր Բրիտանական թանգարանին մէջ, սակայն 1872 Դեկտ. 14ի Անգլ-Եթովպական դաշնագրութեամբ ձեռագիրը Եթովպիա վերադարձուեցաւ) :